Շաքե Ճեպեճյան
Նարա Հարությունյան

ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր – խաղողագործություն, բերքատվությունը համախառն բերք, մասնագիտացում, կոոպերացիա

Խաղողագործությունը Հայկական լեռնաշխարհում զարգացել է դեռևս վաղ անցյալում: Հայաստանում խաղողի որթի բազմաթիվ վայրի տեսակներ են փոխանցվել հնուց, որի մասին են վկայում ասորական և ուրարտական աղբյուրները, Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերված մառանները, բազմաթիվ կարասներ, գինեգործական պարագաներ և այլն: Պեղածո ածխացած սերմերը վկայում են խաղողի այժմյան որոշ տեսակների (Ոսկեհատ, Գառան դմակ, Մսխալի, Արարատի և այլն) տեղական ծագումը: Հայկական մանրանկարչությունը, հուշարձանների վրա խաղողի քանդակները, միջնադարյան քաղաքներից հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները, գրավոր հիշատակարաններն արժեքավոր տեղեկություններ են պարունակում միջնադարյան Հայաստանի զարգացած խաղողագործության մասին:

Խաղողագործությունը եղել և մնում է ՀՀ գյուղատնտեսության առաջատար, հեռանկարային և տնտեսական բարձր արդյունավետություն ապահովող ճյուղերից մեկը և կարևոր դեր է խաղում ինչպես ամբողջ տնտեսության, վերամշակող արդյունաբերության, այնպես էլ խաղողի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների էկոնոմիկայի առաջընթացի ապահովման գործում:

ՀՀ տարածքում առանձնացվում է խաղողագործության տարածման 4 խոշոր արեալ: Առաջատարը Արարատյան դաշտն է, ճյուղը լայն տարածում ունի Զանգեզուրի հարավում, Արփա գետի հովտում և Տավուշի մարզում:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանրապետության խաղողի հողահանդակների զբաղեցրած ընդհանուր մակերեսը տարբեր տարիներին տարբեր մեծություն է ունեցել: 1913թ. այն կազմել է ընդամենը 9,2 հազ. հա:

Խորհրդային իշխանության տարիներին կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների կազմակերպումը, ոռոգման նոր ցանցերի կառուցումը նպաստեց խաղողագործության զարգացմանը: 1940թ.-ին խաղողի այգիների տարածությունը կազմում էր 16,3 հազ. հա, 1960թ.-ին՝ 30,9 հազ. հա, 1980թ.-ին՝ 36,2 հազ. հա:

Խաղողի այգիների տարածությունը սկսեց կրճատվել 1985թ.-ից, երբ ԽՍՀՄ կառավարությունը ընդունեց որոշում հարբեցողության և ալկոհոլիզմի դեմ պայքարի տնտեսական ու քաղաքական առումով չհիմնավորված, անհեռանկարային հայտնի որոշումը: Այն մեծ վնաս հասցրեց երկրի տնտեսությանը, քանի որ խաղողագործությունը տալիս էր գյուղատնտեսության համախառն արտադրանքի 10-11%-ը, արտաքին առևտրից ստացվող արտարժույթի զգալի մասը: 1985-1990թթ. այգիների տարածությունները կրճատվեցին 3,0 հազ. հեկտարով:

Աղյուսակ 1

Խաղողի այգիների տարածությունը, բերքատվությունը և համախառն բերքը ՀՀ-ում և Տավուշի մարզերում

N	Տարիները	Տավուշի մարզում			ՀՀ-ում		
		Տարածությունը, հա	Բերքատվությունը, g	Համախառն բերքը, հազ. տոննա	Տարածությունը, հա	Բերքատվությունը, g	Համախառն բերքը, հազ. տոննա
1	1987	2000	71,5	14,3	32400	64,4	169,5
2	2000	1269	4,59,9	6,3	15027	78	115,8
3	2005	1319	65	8,6	14932	119,7	164,4
4	2007	1347	104,3	13,7	15888	153,6	218,9
5	2010	1313	88,5	11,6	17373	151,5	222,9
6	2013	1355	107,5	14,6	17415	149,8	240,8

Խաղողագործությունն ավելի ծանր վիճակում հայտնվեց 1991թ. հանրապետությունում իրականացված հողի և արտադրության միջոցների սեփականաշնորհման հետևանքով: 90-ական թվականներին միայն Արարատյան դաշտում քանդվեցին ավելի քան 10 հազ. հա խաղողի այգի, և Արմավիրի ու Արարատի ավանդական խաղողագործական մարզերը հայտնվեցին հացահատիկ արտադրողների շարքում: Դրա հիմնականում բացատրվում է՝ մթերող, վերամշակող կազմակերպությունների կողմից իրականացվող գնային ոչ ճիշտ քաղաքականությամբ, խաղողի այգիների մասնատվածությամբ, մեքենայացման մակարդակի իջեցմամբ, վերամշակող ձեռնարկությունների հետ կնքվող պայմանագրերի անհուսալիությամբ, հանրապետության շրջափակմամբ և ամանակարևորը՝ պարարտանյութերի, հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի միջոցների,

ոռոգման ջրի, դրամական միջոցների անբավարարությամբ և բացակայությամբ, ինչպես նաև մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Սակայն, սկսած 2006թ.-ից, նկատվում է խաղողի այգիների ավելացման տենդենց: 2013թ.-ին խաղողի այգիների տարածությունը կազմում է 17,4 հազ. հա 2000թ.-ի 15,0 հազ. հա-ի փոխարեն:

1987թ.-ի համեմատ խաղողի այգիների բերքատվությունը (64,6ց/հա) 2013թ.-ին բարձրացել է 85,4 ցենտներով: Ամենաբարձր բերքատվությունն ապահովվել է 2011թ.-ին՝ 158 ցենտներ:

Տավուշի մարզում, խաղողի այգիների տարածությունը 1987թ.-ի համեմատ 2013թ.-ին, կրճատվել է 645 հա-ով, իսկ բերքատվությունը բարձրացել 54,0 ցենտներով:

Մարզի խաղողի այգիների 90%-ը կազմում էին տեխնիկական սորտերը, որոնք օգտագործվում էին շամպայն գինիների արտադրության համար: Ներկայումս, հիմնվող այգիներում գերակշռում են սեղանի սորտերը:

Նախկին Նոյեմբերյանի շրջանի 5600 հեկտար պտղի և խաղողի այգիներից այսօր մնացել է 500 հելտար: Մինչև 50 հազ. տոննա պտուղ և խաղող արտադրող շրջանն այժմ արտադրում է ընդամենը 2-3 հազ. տոննա: Մարզի բազմաթիվ գինու և պահածոների նախկինում կառուցված գործարանների գերակշռող մասը չեն գործում կամ աշխատում են իրենց հզորության 10-15%-ի չափով: Այսպես, օրինակ, Բերդավանի գինու գործարանի բազայի վրա ստեղծվել է Կարեն և Արշակ եղբայրների գինեգործական ընկերությունը, որը տարեկան ընդունում և վերամշակում է ընդամենը 300-500 տոննա խաղողի հումք:

Մինչ տնտեսական ռեֆորմը, Տավուշի մարզը մասնագիտացած է եղել ծխախոտագործության, պտղաբուծության, կաթնային տավարաբուծության, խաղողագործության և խոզաբուծության ուղղությամբ: Ներկայումս մասնագիտացման ուղղությունն է՝ մսակաթնային տավարաբուծությունը, կարտոֆիլագործությունը, հացահատիկի արտադրությունը, խոզաբուծությունը, ոչխարաբուծությունը և խաղողագործությունը: Այս մասնագիտացումը բխում է մարզի բնակչության սեփական արտադրությամբ սննդի պահանջների բավարարման անհրաժեշտությունից: Ինչպես տեսնում ենք, խաղողագործությունը հայտնվել է վերջին տեղում: Պատճառը արտադրության և իրացման հետ կապված դժվարություններն են:

Հեռանկարում նախատեսվում է մարզը մասնագիտացնել մսակաթնային տավարաբուծության, պտղաբուծության, խաղողագործության, խոզաբուծության, կերարտադրության և ծխախոտագործության ուղղությամբ, որը բխում է բնատնտեսական և աշխատանքային ներուժի առավել արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունից:

Շուկայական հարաբերությունների անցման պայմաններում, հանրապետության խաղողի այգիների սորտային կազմը, մշակության տեխնոլոգիան, արտադրության մասնագիտացումը, գյուղացիական տնտեսություններում արտադրության փոքր չափերով կազմակերպումը, վերամշակող կազմակերպությունների տեխնիկական հագեցվածությունը չեն համապատասխանում ներքին և արտաքին շուկայի պահանջներին:

Խաղողագործության հետագա զարգացումը պայմանավորված է ճյուղում ներդրումային արդյունավետ քաղաքականության իրականացմամբ, որին կարելի է հասնել՝ ներդրողներին լրացուցիչ հարկային արտոնություններ տալով:

Նշված հիմնախնդիրների լուծման լավագույն տարբերակներից մեկը հանդիսանում է կոոպերացումը, որը կարող է զարգանալ տարբեր ուղղություններով՝ արտադրական ու ֆինանսական միջոցների համատեղ օգտագործմամբ, առանձին ոլորտների ու գործունեության ուղղությունների համատեղ գործողությունների համակարգմամբ, արտադրանքի իրացման ու մարքեթինգային հետազոտությունների բնագավառում համատեղ ջանքերի գործադրմամբ:

Ներկայումս, երբ հանրապետության խաղողագործությունը և գինեգործությունը տևական ճգնաժամից հետո զարգացման նոր փուլ են մտել, առաջնային խնդիր է համարվում դրանց խոչընդոտող պատճառների բացահայտումը և հաղթահարման ուղիների մշակումը:

Գրականություն

1. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ազգային վիճակագրական տարեգիրք, Երևան 2014

2. Լ. Լ. Հակոբյան, «Հայաստանի Հանրապետության ագրարային աշխատանքի էկոնոմիկա», Երևան 2014, 342 էջ

АННОТАЦИЯ

Шаке Чепечян
Нара Арутюнян

СОСТОЯНИЕ ВИНОГРАДАРЦТВА И ДАЛЬНЕЙШЕЕ ПАЗВИТИЕ В РА.

Ключевие слова – виноградарство, ыражайность, валовый урожай, специализация, кооперация.

Виноградарство было и остается одним из ведуших отраслей сельского хозвства Армении, обеспечивающий долгосрочно и высокую эффективность отраслей экономики. Оно стало быстро расти после установления советской власти. Были созданы специализированные хозяства, построились многочисленные винодельнные заводы.

В 1991г., в результате приватизации земель, крупнейшие виноградарские хозяства были ликвидированы, и создавались мелкие крестьянские хозяства.

Большая часть виноградников были уничтожены или заложены под зерновые культуры.

В статье отмечаются ряд мероприятий направленные на дальнейшие развитие виноградарства в Тавушском марзе и в республике в целом.

ANNOTATION

Shake Chepechyan
Nara Harutyunyan

THE STATE OF DEVELOPMENT OF VITICULTURE IN RA

Key words – viticulture, fruitfulness, gross crop, specialization, cooperation

Viticulture has been and continues to stay one of the leading, prospective branch, which ensures long-term economic efficiency in the agriculture of RA. It rapidly began to grow after the establishment of foviet rule. There were founded specialized farms and were built several wine factories.

As a result of privatization in 1991, tne biggest viticultural farms abolished and were established small farms.

Most vineyards were destroyed and the areas were put under grain crops.

The article mentions a number of measures aimed at further development of viticulture in RA and in its Tavush region.